

էր¹, եւ ըստ ճոխութեան հայ լեզուին եւ խոհանոցին՝ իրեն հոմանիշ ունէր խահր² եւ համադար³ կամ համահար⁴ բարդերը. ըստ որում ազոնց մէջ կը խառնուէին համեմք⁵ կամ համեմանք⁶ կամ համեմոցն տառքանք⁷, որ պաշտօն ունէին « առ զանազան խորտիկան անուշել » (Յճխ. 59): Մանաւանդ թէ ազոցմէ՝ կախուած էր կերակրոց յաջողութիւնը. այս պատճառաւ ազնուականք պատրաստել կու տային « համեմ խախտոքք անուշարար առանձինն »՝ իրենց խոհանոցին համար (Եղիշ. 173), բաղադրուած անշուշտ շտեմարանի ծանօթ նիւթերէն (աստ, 15-6). չհաշուելով սովորական աղը (աստ, 16), զոր մատենագիր մը կ'անուանէ « անուշիչ խորտկաց, որ զհամեղութիւն ճաշակացն համահամ բերմացն տայ » (Յճխ. 110):

2. Մեր տիկնայց, եւ յայտնի է թէ տերանց ալ, փափկաճաշակ բիմբերը շատ կ'ախորժէին պարարիլ նաեւ « ոռորովք զուարակաց » կամ ընտանի մեծ անասնոց (Ե-

1. Եղիշ. 107, 217. Փրպ. 28. Յճխ. 59. Կաղ. 47. Ոսկ. Թղթ. Ա, 127, 469, 530. Մտթ. Բ, 69, 71. Ծննդ. ԻԷ, 4 եւն, Ծագած է Պրս. խարդի կամ Պահլ. խարտիկ հոմանշէն (Հիւրշ. 161), — 2. Փիւ. Ճոք. 15, 21. եւն ի Հյկղ. — 3. Ոսկ. Թղթ. Ա, 127, 469. Մտթ. Բ, 69. Տար. վերլծ. — 4. Յճխ. 58, Մանդ. 30, 36, — 5. Յճխ. 59, — 6. Ոսկ. Մտթ. Բ, 69, — 7. Փիւ. Ճոք. 21, 30: